Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔ ԿԱՐԼՍՐՈՒԵ (ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Վայրը և ժամկետները

2026 թվականի հունիսի 10-ից 12-ը, ք.Կարլսրուե (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոնի (այսուհետ՝ ՄՀԿ) կառավարիչների խորհրդի 139-րդ նիստին

6. Քննարկված թեմաները

1. ՄՀԿ գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրինության զեկույցը,
2. ՄՀԿ 2026-2028 թվականների աշխատանքային ծրագիրը և բյուջեն,
3. 2028-2034 թվականների բազմամյա ֆինանսական շրջանակի օրենսդրական առաջարկների վերաբերյալ ԵՄ ինստիտուտների միջև ընթացող բանակցությունների ընթացիկ վիճակը,
4. ՄՀԿ կողմից իրականացվող ծրագրերի ընթացքն ու ասոցացված երկրների մասնակցության արդյունքները,
5. ՄՀԿ ծրագրերում ասոցացված երկրների մասնակցության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
6. ՄՀԿ գործունեության հիմնական ոլորտներին առնչվող թեմատիկ զեկույցներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՄՀԿ կառավարիչների խորհրդի 139-րդ նիստին ներկայացվել են ՄՀԿ գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրինության զեկույցը, 2026-2028 թվականների աշխատանքային ծրագիրը և բյուջեն, 2028-2034 թվականների բազմամյա ֆինանսական շրջանակի օրենսդրական առաջարկների վերաբերյալ ԵՄ ինստիտուտների միջև ընթացող բանակցությունների ընթացիկ վիճակը, ՄՀԿ կողմից իրականացվող ծրագրերի ընթացքն ու ասոցացված երկրների մասնակցության արդյունքները: Ներկայացվել են զեկույցներ «Հետազոտական բարեվարքության և էթիկայի շրջանակը», «Կայուն սննդի համակարգեր», «Միջուկային երաշխիքներ», «Միջուկային երաշխիքներ», «Կայուն մրցունակություն», «Միացյալ հետազոտական կենտրոնի համագործակցությունը Frontex-ի հետ» թեմաներով: Քննարկվել են Միացյալ հետազոտական կենտրոնի ընդլայնմանն առնչվող հարցեր, ներկայացվել են հաշվետվություններ Կենտրոնի ծրագրերում ասոցացված երկրների մասնակցության վերաբերյալ:

Սարգիս Հայոցյանը ներկայացրել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումները, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագիրը, մասնավորապես, ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված քայլերը և այն գիտական ուղղությունները, որոնց շրջանակում հնարավոր է զարգացնել համագործակցությունը Միացյալ հետազոտական կենտրոնի լաբորատորիաների հետ: Սարգիս Հայոցյանը ներկայացրել է նաև «Ակադեմիական քաղաք» նախագիծը, որի նպատակն է ստեղծել ժամանակակից կրթական, հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր: «Ակադեմիական քաղաք» նախագծի շրաջանակում նախատեսվում է ստեղծել ժամանակակից լաբորատորիաներ՝ հագեցած գերժամանակակից սարքերով: Ուստի կարող է առաջանալ Միացյալ հետազոտական կենտրոնի ընձեռած հնարավորությունների շրջանակում համագործակցային կապերի խթանման էական հնարավորություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Հանդիպման ժամանակ կայացվել են օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումներ: Հայաստանի Հանրապետությանն առնչվող որոշումներ չեն կայացվել:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Եվրոպական հանձնաժողովի Միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 139-րդ նիստին կայացվել են օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումներ:

10.Ստորագրությունը, ամսաթիվը

6/17/2026

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

17 հունիսի 2026թ.